ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **27.11.2024թ.**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամների առաջարկությամբ Տեսչական մարմնի 2025 թվականին իրականացվող ստուգումների և գործունեության տարեկան ծրագրերը հաստատելու, Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2025 թվականի գործունեության տարեկան ծրագիրը հաստատելու, Որակի ապահովման վարչության 2024 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության հաշվետվությունը քննարկելու և Տեսչական մարմնի 2024 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողանի գնահատումը հաստատելու նպատակով նախատեսվում է անցկացնել արտահերթ նիստ՝ էլեկտրոնային քվեարկությամբ:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգ.

1. Տեսչական մարմնի 2025 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:
2. Տեսչական մարմնի 2025 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:
3. Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2024 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության հաշվետվության քննարկում, Տեսչական մարմնի 2024 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողանի գնահատման հաստատում:
4. Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2025 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ա. Ավանեսյան	- ՀՀ առողջապահության նախարար (Խորհրդի նախագահ)
Ռ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Տ. Հակոբյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Լ. Բալյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Սիրունյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ժ. Մայիլյան - «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Հ. Լիլոզյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա առողջապահական գիտությունների ֆակուլտետի գիտաշխատող

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Ա. Ավանեսյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
2) Ռ. Սարգսյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
3) Տ. Հակոբյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
4) Ա. Խոջոյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
5) Լ. Բալյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
6) Վ. Սիրունյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
7) Ժ. Մայիլյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
8) Տ. Քեյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
9) Շ. Դանիելյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
10) Հ. Լիլոզյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ օրակարգի բոլոր հարցերին **10 կողմ, 0 դեմ:**

Խորհուրդը որոշեց.

1. Հաստատել Տեսչական մարմնի 2025 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը:

2. Հաստատել Տեսչական մարմնի 2025 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

3. Հաստատել Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2025 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

4. Հաստատել Տեսչական մարմնի 2024 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողանի գնահատումը:

5. Ընդունել ի գիտություն Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2024 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության հաշվետվությունը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ